



**«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴԴՐՈՑ» ԴՈԱԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍՏԵՂՃԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**ՀԵՂԻՆԱԿ**                      **Հեղինե Ավետիսյան**

**ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/**        **«Քիմիա»**

**ՂԵԿԱՎԱՐ**                    **Հասմիկ Մովսիսյան**

**ՍԵՎԱՆ-2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ներածություն.....</b>	
3	
1.1 Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը փոխգործուն մեթոդների միջոցով.....	5
1.2 Փոխներգործուն մեթոդների կիրառության հնարավորությունները քիմիայի դասագործընթացում.....	10
1.3 Հարցախույզ ուսուցիչների շրջանում.....	15
<b>Եզրակացություններ.....</b>	
.17	
<b>Օգտագործված գրականության ցանկ.....</b>	<b>գրականության</b>
	18

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում բարեփոխումները պայմանավորված են կրթության որակի բարձրացմամբ և սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղորդելու նախապայմաններով: Այս համատեքստում կարևոր են համարում ուսումնական գործընթացում սովորողների դերակատարության ու մասնակցության վերաբերումը: Հաշվի առնելով ժամանակաշրջանի մարտահրավերները՝ կարող են նկատել, որ սովորողների լայն շրջանակներում նկատվում է աշխատունակության ցածր մակարդակ, որի հիմնական պատճառներից մեկը կարող են համարել դասի ժամանակ վերջիններիս հետաքրքրությունների ու ցանկությունների անհամաձայնությունը: Սովորողները համացանցային հարթակներում ստանում են զանազան տեղեկատվություն, և ուսումնական գործընթացի ընթացքում ստացած գիտելիքները այլևս չեն համապատասխանում վերջիններիս պահանջմունքներին:

Այստեղից կարող են եզրահանգել, որ սովորողն ինքն է հաճախ պահանջում, որ ուսուցիչը վերանայի դասավանդման իր մոտեցումները, դասը հագեցնի այնպիսի բաղադրիչներով, որ հետաքրքիր լինի, ինչն էլ ենթադրում է , որ սովորողն այդ պարագայում կդառնա դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը, ավելի շատ կխոսի, կգործի դասին, կզարգանա վերջինիս ինքնուրույնությունն եւ նախաձեռնությունը:

Կարծում են, որ այս պարագայում կառուցողական ու արդյունավետ դասի նախապայմաններից է աշակերտակենտրոն ուսուցումը, որը ուղեկցվում է սովորողի անմիջական մասնակցայնությամբ, դասընկերների և ուսուցչի հետ ուղիղ համագործակցությամբ:

Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ վերջիններս կդառնան գործընթացի գործընկերային կողմ, կունենան իրենց դերը, ավելի շատ կաշխատեն դասին, կհամագործակցեն, կբանակցեն ընկերների հետ, կկատարեն ինքնուրույն եզրահանգումներ: Ուսուցիչ-սովորող համագործակցությունը թույլ կտա, որ վերջինս լինի ինքնուրույն, նախաձեռնող, անկաշկանդ կարողանա կարծիք հայտնել, իր հետաքրքրությունների մասին խոսել ու բավարարել դրանք հենց դասապրոցեսի ժամանակ: Ուստի կարծում են, որ ավանդական դասն իր ողջ մեթոդական համակարգով հարկավոր է վերանայել՝ դասի հիմնական ակտիվ սուբյեկտ դարձնելով հենց սովորողներին:

«Քիմիա» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներումն նույնպես սովորողը պետք է լինի դասապրոցեսի գործընկերային կողմ, ունենա ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու և դասին ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն: Ավանդական դասին բազմանդամ դասարաններում խոսքի հնարավորություն տալով մի քանի սովորողի՝ նշանակում է ուսուցիչն ուղղակիորեն «գրկում է» մյուսներին խոսելու ու հաղորդակցվելու հնարավորությունից: Իսկ ահա փոխգործուն մեթոդական համակարգի ներդրումը մեծապես կարող է նպաստել սովորողների համընդհանուր մասնակցությանը դասին: Խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը թույլ կտա, որ դասարանում սովորողների մասնակցությունը լինի համաչափ, որևէ սովորող չմնա պարապ: Այս մոտեցումը, կարծում եմ, բավականին արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողների աշխատունակության, առաջադիմության բարձրացման և առանցքային կարողունակությունների ձևավորման վրա:

**Չետագոտության թեմայի արդիականությունը:** Չետագոտության արդիականությունը պայմանավորված է դասապրոցեսին և մասնավորապես քիմիայի դասավանդման ընթացքում փոխգործուն մեթոդների կիրառման անհրաժեշտությամբ, որից կախված է սովորողների առաջադիմությունն ու համաչափ մասնակցությունը դասին, ինքնուրույնության և նախաձեռնության զարգացումը:

**Չետագոտության նպատակը:**

Ուսումնասիրել քիմիայի դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող փոխգործուն մեթոդների ազդեցությունը կրթության որակի բարձրացման և դասի ժամանակ սովորողների դերի վերանայման համատեքստում:

**Չետագոտության խնդիրը:**

- Ցույց տալ փոխգործուն մեթոդական համակարգի դերը սովորողների աշխատունակության բարձրացման, ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացման վրա:
- Կարևորել քիմիայի դասաժամին սովորողների համագործակցությունը միմյանց հետ՝ որպես մի շարք կարողունակությունների զարգացման նախապայման:

## **1.1 Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը փոխգործուն մեթոդների միջոցով**

**«Վատն է այն աշակերտը, որը ուսուցչին չի գերազանցել»**

**ԼԻՈՆԱՐԴՈ ՂԱ ՎԻՆՉԻ**

Կրթական համակարգում բարեփոխումները պայմանավորված են կրթության որակի բարձրացմամբ և սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղորդելու նախապայմաններով: Հենց այս նպատակով է հանրակրթական համակարգում մեծ թափով իրականացվում բարելավումներ՝ կրթական համակարգն ուղղելով դեպի կարողունակահեն ուսուցման մոդելին, որտեղ սովորողը դասի կենտրոնական սուբյեկտն է: Այս համատեքստում բավականին արդյունավետ է ինտերակտիվ ուսուցումը, որը ենթադրում է շարժուն և համագործակցային դասերի իրականացում, որտեղ սովորողը չի սպասում, որ ուսուցիչն իրեն դաս բացատրի: Այս պարագայում նույնիսկ նոր նյութի հաղորդման ժամանակ ակնկալվում է սովորողի ուղիղ մասնակցությունը, ինքնուրույնությունը: Սովորողն ու ուսուցիչը համագործակցում են, որևէ փոխգործուն մեթոդի շրջանակներում, սովորում նոր դասի կարևոր հասկացությունները, կանոնների հիման վրա բերում են օրինակներ, զանազան աղյուսակների ու դիագրամների օգնությամբ մատնանշում նմանություններն ու տարբերությունները, կատարում փորձեր, հետազոտություններ:


*Փոխգործուն մեթոդների կիրառումը դասին կատարում է երկու կարևոր գործառույթ.*

- *նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,*
- *խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:*

Փոխգործուն մեթոդները նպաստում են սովորողների մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր

Նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել: Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով շփման կազմակերպում և զարգացում, որը նպաստում է փոխհասկացվածությամբ և փոխներգործությամբ յուրաքանչյուրի համար անհատապես կարևոր խնդիրների լուծմանը<sup>1</sup>: Ինչպես նշել էի՝ ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և մեծապես կարող են նպաստել սովորողների կարողունակությունների, գործնական հմտությունների զարգացմանը, առանց որոնց ներկայիս կրթական համակարգը մրցունակ չէ և չի կարող ունենալ արդյունավետ վերջնարդյունքներ:

### **Աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներն են.**



### **Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.**

<sup>1</sup>Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Պետրոսյան Մ., Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004, էջ 26:

- Սովորողների համար գիտելիքաստեղծ միջավայրի ապահովումը:
- Հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը:
- Անհատական առանձնահատկությունների բացահայտումը:
- Ստեղծագործական մտածողության զարգացումը,
- Ինքնուրույն գործելու կարողության խրախուսումը,
- Կոլեկտիվ մտածողության ձևավորումը
- Վերլուծական կարողությունների ձևավորումը:



Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման համար յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է: Ընդ որում՝ նա կարող է հանգիստ դրանք փոփոխության ենթարկել՝ հարմարեցնելով դասարանի պահանջներին: Մեթոդի ցանկացած կիրառում եզակի է և անկրկնելի: Կարող եմ պնդել, որ ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական գիտելիքից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Ուսուցչի համար անչափ կարևոր է, որ մեթոդական աշխատանքը (ուսուցման բովանդակությունն ու ձևերը) կատարվի տրամաբանորեն հիմնավորված, և նյութի մատուցման ձևը համապատասխանի բովանդակությանը: «Մանկավարժական աշխատողն իրավունք ունի ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ»<sup>2</sup>: Կարևոր է ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը: Անչափ կարևոր է նաև դասավանդման գործընթացում հաշվի նառնել յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները, նրա օժտվածությունն ու դրա բացակայությունը:

Այստեղ շատ կարևոր էմ համարում նև ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ, առարկայական մասնախմբերի նպատակային աշխատանքը, նորագույն մեթոդների փորձարկումն ու տեղայնացումը դասին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել

<sup>2</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:

գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով»<sup>3</sup>:

Առհասարակ, ուսուցչի համար դասի նպատակների սահմանումը կրթական գործընթացի կարևոր փուլն է համարվում, որից էլ կախված է ուսումնական ընթացքի բնականոն ու հաջող առաջընթացն ու սովորողների առաջադիմությունը: Ուսումնական գործընթացի դրական ելքը պայմանավորված է հենց կազմակերպչական ընթացքի լավագույն տարբերակի ընտրությամբ, կրթության բովանդակության, մեթոդների, միջոցների, ուսուցման ձևերի նպատակային համադրմամբ: Շատ կարևոր է, որ դասի պլանավորման փուլում հաշվի առնվեն սովորողի պահանջմունքները, անհատական կարիքները, նպատակ դրվի սովորողների համար ինքնուրույն գործելու հնարավորություններն ընդլանել, ստեղծել վերջիններիս նորարարական գաղափարներն ու ներուժը գործի դնելու համար: Կարծում եմ, որ այս նպատակներին հասնելու համար անչափ կարևոր է դասի կազմակերպչական հատվածում հաշվի առնել սովորողների դերի կարևորությունը՝ ընդհանուր գնալով կարողունակահեն կրթությանը:

Նորագույն կրթական տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ»<sup>4</sup>:

Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ հանդես գա նախաձեռնողի դերում, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս, համագործակցի դասընկերների հետ, այլ խոսքով՝ պայմաններս ստեղծվեն սովորողի հաջողության հասնելու մոտիվացիայի բարձրացման համար: Մոտիվացիան անհատի հոգեբանության անբաժանելի մասն է, շարժիչ ուժը, որը թույլ չի տալիս կորցնել ակտիվ գործունեությունը որոշակի նպատակի հասնելու ժամանակ: Մոտիվացիան հիմնական հասկացություններից մեկն է, որն օգտագործվում է մարդու վարքի շարժիչ ուժերը

<sup>3</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:

<sup>4</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 4:



բացատրելու համար: Դրա ցանկացած տեսակ կարևոր դեր է խաղում մարդու հոգեբանության և հասարակության մեջ նրա վարքածի ուսումնասիրության մեջ:

Հետազոտողները նշում են, որ աշակերտի սովորելու մոտիվացիայի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ուսումնական հաստատությունը, ուսումնական գործընթացի կազմակերպումը, ուսուցչի մարդկային ու մասնագիտական որակները, աշակերտի և ուսուցչի սուբյեկտիվ բնութագրերը, ուսումնական առարկայի առանձնահատկությունները<sup>5</sup>: Վերահաստատենք մեր այն պնդումը, որ մոտիվացված, կրթության հարկն իմացող, սեփական ուսումնառությանը պատասխանատու մոտեցող աշակերտներ ձևավորելու համար իր առանցքային դերն ունի նորարար ու կարողունակ ուսուցիչը, նպատակային պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Որպեսզի մանկավարժը դասարանում կարողանան ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ, պետք է մեծ ուշադրություն դարձնի անհրաժեշտ բնութագրիչներին, որոնք են.

**1/** Դասարանում երեխաների միջև առկա են աշխույժ, բարիդրացիական փոխհարաբերություններ, լավտեսական տրամադրություն, փոխհամագործակցություն: Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքներ: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը, իսկ քննադատությունն իրականացվում է նուրբ տոնով:

**2/** Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտ: Այստեղ մշտապես բոլորն իրենց պաշտպանված են զգում:

**3/** Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակները, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արդարամտությունը, անշահախնդրությունը և այլն:

**4/** Սովորողներն ակտիվ են, աշխույժ: Նրանք արագ արձագանքում են, եթե պետք է ինչ-որ օգտավետ աշխատանք կատարել<sup>6</sup>:

Կարծում եմ, որ հատկապես աշակերտների շրջանում շատ կարևոր է ուսումնառության գործընթացի նկատմամբ գիտակից ու կառուցողական մոտեցման ձևավորումը, ինչի համար կարևոր ու առանցքային նախապայման է, որ ուսումնական առարկան վերջինիս համար լինի հետաքրքիր, աշակերտը ոչ միայն տեսնի, այլ կիրառի, նախագծի, հետազոտի, բացահայտի,

---

<sup>5</sup> Алтунина И.Р. Мотивы и мотивация социального поведения: Учебное пособие / И.Р. Алтунина. Москва, 2006. 144 с.

<sup>6</sup> [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013\(4\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf) Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013, էջ 10:

վերլուծի ու տրամաբանի: Այսքանով հանդերձ, աշակերտը պետք է նաև խրախուսվի, ուշադրության արժանանա, կարողանա բավարարել սեփական անհատական կարիքներն ու կրթական պահանջմունքները: Հենց նմանօրինակ աջակցող կրթական միջավայրում է հնարավոր ոգևորված ու մոտիվացված աշակերտներ ունենալ:

Այսպիսով, փոխգործուն մեթոդները, աշակերտակենտրոն ուսուցումը, մանկավարժական նոր ու արդիական մոտեցումները կարող են լուծել մի շարք մանկավարժական խնդիրներ և նպաստել սովորողների առաջադիմությանն ու աշխատունակության բարձրացմանը: Ուստի և կարևոր եմ համարում ուսուցչի ինքնակրթվելու, զարգանալու, նոր գիտելիքներ ու կարողունակություններ ձեռք բերելու մոտիվացիան:

## **1.2 Փոխներգործուն մեթոդների կիրառության հնարավորությունները քիմիայի դասագործընթացում**

Քիմիան բնական գիտություն է, որը ուսումնասիրում է նյութերի բաղադրությունը, քիմիական կառուցվածքը, հատկություններն ու փոխարկումները: Քիմիան էական նշանակություն ունի մեր կյանքում և երբեմն բնութագրվում է որպես «կենտրոնական գիտություն», քանի որ այն միմյանց հետ է կապում այլ գիտություններ՝ կենսաբանություն, ֆիզիկա, բժշկություն, երկրաբանություն և բնապահպանություն: «Քիմիա» առարկայի ուսումնառությունը աշակերտին հնարավորություն է տալիս հասկանալու քիմիայի հիմնական սկզբունքները, նյութերի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրման գիտական մեթոդները, քիմիական ռեակցիաների ընթացքում տեղի ունեցող ջերմային երևույթները և քիմիական տերմինաբանությունը, ինչը նպաստում է վերլուծական, քննական և ստեղծագործական մտածողությամբ անհատի ձևավորմանը: Քիմիայի դասընթացի յուրացման ընթացքում աշակերտը ձեռք կբերի քիմիական գրագիտություն, նյութերի հետ անվտանգ վարվելու գործնական հմտություններ, կտվորի ինչպես պետք է պլանավորել և իրականացնել քիմիական հետազոտությունը, հավաքագրել, մշակել և վերլուծել ստացված փորձնական տվյալները, կատարել հիմնավորված եզրակացություններ: Նյութերի հատկությունների մասին ստացած քիմիական գիտելիքները կօգնեն սովորողին հասկանալու

բալանսավորված սննդակարգի և առողջ ապրելակերպի կարևորությունը մարդու արողջության պահպանման համար:

«Քիմիա» առարկայի գլխավոր նպատակը սովորողների մոտ քիմիական գիտելիքների համակարգի և դրանց կիրառման հմտությունների ձևավորումն է, որպեսզի նրանք դառնան ժամանակակից արագ փոփոխվող, հասարակության լիարժեք անդամներ և նախապատրաստվեն քիմիային առընչվող հետագա ուսումնառությանը կամ կարիերային:

*«Քիմիա» առարկան գլխավորապես նպատակ է հետապնդում սովորողներին հնարավորություն տալ.*

- ձևավորել և կիրառել քիմիական գիտելիք, հասկանալու գիտության բնույթը քիմիային առընչվող համատեքստում և գնահատել քիմիայի և մյուս գիտությունների միջև գոյություն ունեցող կապերը,
- զարգացնել գիտական հետազոտություններ կատարել ունակությունները, ստեղծարար և քննականորեն մտածել և քիմիայի համատեքստում անհատապես կամ խմբերով խնդիրներ լուծել կարողությունը,
- հասկանալ քիմիական տերմինաբանությունը և հաղորդակցվել՝ ներկայացնելով քիմիային առընչվող հարցերի վերաբերյալ գաղափարներ և տեսակետներ,
- զարգացնել բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական հարցերի վերաբերյալ պատասխանատու քաղաքացու վերաբերմունք<sup>7</sup>:

Ինչպես նշել էինք, ավանդական կրթական մոդելի վերանայումն ու կարողունակահեն կրթությանն ընդհանրապես գնալն այսօր օրախնդիր է՝ պայմանավորված կրթական բարեփոխումներով: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման

<sup>7</sup> <https://escs.am/files/files/2020-07-15/9e1131859476fb8c923ac9492f9f119c.pdf> Չափորոշիչ և օրինակելի ծրագիր «Քիմիա»:

գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից<sup>8</sup>: Այստեղից ակնհայտ է դառնում, որ ավանդական դասն այլևս չի կարող բավարարել ժամանակակից սերնդի կրթական պահանջմունքները և նպատակահարմար է դասի պլանավորման հիմքում դնել կարողունակաժեղ մոտեցումներ: Ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու<sup>9</sup>:

Քիմիայի դասավանդման ընթացքում կարելի է կիրառել բազմաթիվ փոխգործուն մեթոդներ, ինչպիսիք են.

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- T-աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզ
- Վեճնի դիագրամ
- Խորանարդում
- Խճանկար


***Դիտարկենք մեթոդների կիրառման մի քանի օրինակ քիմիայի դասագործընթացի ընթացքում.***

**1/ Գաղափարի քարտեզագրումը** թույլ է տալիս ստեղծել դիագրամ՝ վիզուալ կերպով դասակարգելով տրված ինֆորմացիան: Նմանատիպ քարտեզները կառուցվում են մեկ մեծ գաղափարի շուրջ, որից ճյուղավորվում են ավելի փոքր, ածանցված գաղափարները: Քարտեզը կարող էք կառուցել ինչպես ձեռքով, այնպես էլ բազմաթիվ կայքերի ու հավելվածների միջոցով: Այս մեթոդը զննական մեթոդ է և սովորողին հնարավորություն է տալիս տրված թեմայի վերաբերյալ

<sup>8</sup> ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:


<sup>9</sup> Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020:

հավաքագրել իր գիտելիքներն ու պատկերել պայմանական քարտեզի վրա: Մեթոդը կենտրոնացնում է ուշադրությունը, հիշողությունը, զարգացնում մետաճանաչողությունը:



**2/ T-աձև աղյուսակ:** Օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպման ձևով, և՛ կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է 2 բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների կամ համադրություն-հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Բավականին հարմար է խմբային աշխատանքի ժամանակ:

ՏԱՐԲԵՆՆԵՐ	ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՆԱԶԵՎԸ



**3/ Մտագրոհ:** Մտագրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած

տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները գրի է առնվում գրատախտակին: Ամեն միտք, թեկուզ անվստահ և վախվորած, խրախուսվում է: Խմբային եղանակով սովորողները հնարավորություն են ունենում քննարկել հնչեցվող մտքերը, բանալի բառերը, ինչը բավականին արդյունավետ է:

**Փոխգործուն մեթոդի առավելություններն` ի համեմատ ուսուցման ավանդական մեթոդների.**

- *Սովորողի կողմից ուսուցանվող նյութի ինքնուրույն ուսումնասիրություն:*
- *Խմբային աշխատանքի միջոցով դասընկերների հետ համագործակցային հարաբերությունների հաստատում:*
- *Ուսուցանվող նյութի հեշտ ընկալում:*
- *Ուշադրության և պատասխանատվության զարգացում:*
- *Սովորել սովորեցնելով կարողունակության ձևավորում:*
- *Ժամանակի արդյունավետ օգտագործում:*
- *Հաշվետու լինելու կարողության ձևավորում:*
- *Նյութի ներկայացման բազմապիսի ձևերի հնարավորություն, ինչն կարող է կրկնության բազմաթիվ հնարավորություններ ընձեռել:*
- *Մոտիվացիայի բարձրացում, հետաքրքրությունների բավարարում:*

Այսպիսով, կարծում եմ, որ ժամանակակից սովորողներն իսկապես կարիք ունեն դինամիկ և շարժուն կրթական միջավայրի: Ֆրոնտալ հարցումը, դասավանդման ավանդական այլ եղանակների կիրառությունը այլևս չի հետաքրքրում և չի մոտիվացնում սովորողներին: Ավելին` ներկայումս սովորողի համար շատ կարևոր է դասին ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու հանգամանքը: Վերջինս պետք է հնարավորություն ունենա` ինքնուրույն հետազոտելու, պրպտելու, դասի մասին օժանդակ տեղեկություններ հավաքելու, դրանք մշակելու և գործնականում կիրառելու: Հենց այստեղ է, որ կարևոր եմ համարում ժամանակակից կրթական տեխնոլոգիաներին ընդառաջ գնալու, սովորողների հետ համագործակցային գործունեության մեջ մտնելու ուսուցչի ձգտումները:

Միայն այս կերպ է հնարավոր հասնել հաջողության, որակապես բարելավել կրթական միջավայրը` դարձնելով մասնակցային, աջակցող, հարուստ և դինամիկ: Կարծում եմ, որ

ինտերակտիվ ուսուցումն իր նպաստը կբերի բնագիտական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների և սովորելու մոտիվացիայի բարձրացմանը, ուստի ուսուցիչն իր նախաձեռնողական քայլերով կարող է հասնել նշված արդյունքներին:

### 1. 3 Հարցախույզ ուսուցիչների շրջանում






Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում իմ կողմից իրականացվել է հարցախույզ՝ քիմիայի ուսուցիչների շրջանում: Տվյալների հավաքագրման համար նախապես մշակվել են հարցաթերթ և առցանց հարցում իրականացվել, որի նպատակն էր.

- ✓ Ուսումնասիրել, հավաքագրել և վերլուծել քիմիայի ուսուցիչների կարծիքները փոխգործուն մեթոդների կիրառման վերաբերյալ:
- ✓ Համաձայն հարցված ուսուցիչների դիտարկումների՝ քննության առնել ինտերակտիվ ուսուցման առավելությունները՝ որպես կարողունակահեն կրթության գործիք:
- ✓ Վեր հանել մանկավարժական օրինակելի փորձը՝ սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ:

### ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցաթերթիկ ուսուցիչների համար

N	Հարցադրում	Պատասխաններ
---	------------	-------------

1	<p>Արդյունավե՛տ է արդյոք փոխգործուն մեթոդական շղթայի կիրառումը «Քիմիա» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում՝ որպես սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այո</li> <li>• Ոչ</li> </ul>	 <p>Այո-90 % Ոչ-10 %</p>
2	<p>Փոխգործուն մեթոդների կիրառման ընթացքում առկա՞ է արդյոք թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն աշակերտների միջև:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այո</li> <li>• Կան դժվարություններ</li> </ul>	 <p>Այո-70 % Կան դժվարություններ-30 %</p>
3	<p>Արդյոք աշակերտները հաճույքո՞վ են մասնակցում առարկայի դասաժամերին:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այո</li> <li>• Ոչ</li> <li>• Երբեմն</li> </ul>	 <p>Այո-60% Երբեմն-40 %</p>
4	<p>Փոխգործուն մեթոդների ընտրության հարցում ունենու՞մ եք դժվարություններ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այո</li> <li>• Ոչ</li> <li>• Երբեմն</li> </ul>	 <p>Այո-90 % Ոչ-10 %</p>
5	<p>Տիրապետու՞մ եք աշակերտներին հետաքրքրելու, մոտիվացնելու մանկավարժական պայմաններին:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այո</li> <li>• Ինչ-որ չափով</li> </ul>	 <p>Այո-60% Ինչ-որ չափով-40%</p>

Հարցման արդյունքում պարզ դարձավ.



- Ուսուցիչների շատ չնչին մասը դժվարություններ ունի փոխգործուն մեթոդներով աշխատելիս:
- Հարցման մասնակից ուսուցիչների գերակշիռ մասը դիտարկում է փոխգործուն մեթոդների կիրառումը՝ որպես աշակերտի սովորելու մոտիվացիան բարձրացնելու, արդյունավետ դասագործընթաց ունենալու, վերջիններիս ինքնուրույնությունը, նախաձեռնությունն ու ստեղծագործական կարողությունները զարգացնելու մանկավարժական գործիք:
- Ուսուցիչների գերակշիռ մասն այն կարծիքին է, որ փոխգործուն մեթոդներով պլանավորված դասերի ընթացքում աշակերտների միջև առկա է թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն:

**Այսպիսով, կարելի է պնդել, որ իրականացված հարցումն արդյունավետ էր, քանի որ կարողացա վերահաստատել ու հիմնավորել աշխատանքի տեսական մասում կատարած պնդումներն առ այն, որ ուսուցման ժամանակակից ու աշակերտակենտրոն մոտեցումները բավականին արդյունավետ են սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացման գործում՝ այդ թվում նաև քիմիայի դասագործընթացում:**

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրական վերջնարդյունք ունենալու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը առարկայական մեթոդական միավորման ներսում, գործընկերների հետ ուղիղ համագործակցությունը, զանազան վերապատրաստումներին մասնակցությունը:

Քիմիայի դասին սովորողների առաջադիմությունն ապահովելու, վերջիններիս համար ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու համար ուսուցիչը պետք է բարձր գնահատի ինտերակտիվ ուսուցման դերը, դասին հաճախ օգտագործի փոխգործուն մեթոդներ, հետաքրքիր ու ճանաչողական խաղային հնարներ, դասին ներառի ՏՀՏ բաղադրիչ: Շատ կարևոր

Է կարևոր դասին պատկերավոր ու նկարագրական բաղադրիչներ ներառել, հաճախ սովորողներին հնարավորություն տալ լինել սովորեցնողի դերում: Այս ամենը ուսուցիչը պետք է կատարի, որպեսզի բարձրացնի դասարանում սովորողների առաջադիմությունը, հնարավորություններ ստեղծի առողջ մրցակցության համար:

Ամեն բան հենց ուսուցչից է կախված: Եթե կա մոտիվացիա, լավն արարելու, առաջ գնալու ձգտում, ապա տեխնոլոգիապես հագեցած այս ժամանակաշրջանում հնարավոր է գտնել ուղիներ ոլորտում հաղթանակների հասնելու՝ ի շահ երկրի բարգավաճման, մատաղ սերդի կրթության ու դաստիարակության:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:
3. <https://escs.am/files/files/2020-07-15/9e1131859476fb8c923ac9492f9f119c.pdf> Չափորոշիչ և օրինակելի ծրագիր «Քիմիա»:
4. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:
5. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013\(4\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf) Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», Երևան, 2013, էջ 10:
6. Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020:

7. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Պետրոսյան Մ., Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Երևան, 2004:
8. Алтунина И.Р. Мотивы и мотивация социального поведения: Учебное пособие / И.Р. Алтунина. Москва, 2006.